# ԱԶԳԱՅԻՆ

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

### Ի ՏՓԽԵԱՑ ՑԵՐԵՒԱՆ.

Նորին Վեհափառութիւնը դուրս գալով Թիֆլիսից Հոկտեմբերի 25-ին երեկոյեան ժամը 11 ին ուղեկցութեամբ Հրաւիրակ Սրբազանների, Ատրպատականայ վիճակի կառավարիչ Սուքիաս եպիսկոպոսի, Վրաստանի Առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսի, Սինոդի Պրոկուրորի և գեներալ Անբարդանովի՝ հասաւ Աղսթաֆա կայարանը առաւօտեան ժամը 3-ին. այնտեղ դիմաւորեցին Նորին Վեհափառութեան Գանձակի Հայ ժողովրդեան և հոգևորականութեան ներկայացուցիչները և Ղազախու գաւառապետ Իշխան Թարխանովը, որը Գանձակի նահանգապետի կարգադրութեամբ ուղեկից եղաւ Վեհափառ Հայրապետին մինչև իւր գաւառի սահմանն: Ճանապարհին ամենայն տեղ շրջակայ Հայ գիւղերի ժողովուրդը ցընծութեամբ դիմաւորում էր Վեհափառին փոշոտային կայարաններում և կեցցէներով ճանապարհ դնում: Երբ հասաւ Նորին Սրբութիւնն Քարվանսարայ գիւղը, որտեղ պիտի վայելէր յառաջագոյն պատրաստուած նախաճաշիկը տեղական դպրոցական տան մէջ, որը զարդարուած էր ծաղիկներով, ծառատունկերով և գորգերով, մեծ բազմութիւն ժողովրդոց և քահանայից դիմաւորեցին Նորին Վեհափառութեան. ի դիմաց որոց բարեկ. գործակալ Մեսրոպ քահանայն խրոխտ ձայնիւ կարդաց իմաստալից համառօտ ճառ, որով շնորհաւորում էր Նորին Սրբութեան շնորհաբեր գալուստն. զկնի որոյ Նորին Վեհափառութիւն համառօտ խօսքերով յայտնեց իւր գոհունակութիւնը նոցա ցոյց տուած ջերմեռանդութեան համար և ասաց նաև թէ. «Ես շատ անգամ պատահել «եմ այս տան մէջ և ուրախութեամբ տեսել եմ օրուա մէջ «լցուած ուսման ծարաւով ձեր որդիք. ցաւում եմ, որ այս ան- «գամ տեսնում եմ այս շէնքը այսպէս դատարկ և ամայի. բայց «մի յուսահատիք, սերելիք, յոյսներդ դրեցէք Աստուծոյ վերայ «և դարձեալ կը տեսնէք այս շէնքի դռները բաց և ձեր որդիքը

digitised by A.R.A.R.@

«ուսում առնելիս սորա մէջ»։ առ որ ի պատասխանի ժողովրդականք լցուած անպատում խնդութեամբ քանիցս կրկնեցին «կեցցէ» բառը։ Նոյն օրը Հոկտեմբերի 26-ին երեկոյեան ուղեկցութեամբ բազմութեան ձիաւորների Նորին Վեհափառութիւն հասաւ Դէլիժան քաղաքը, ուր նոյնպէս դիմաւորեցին բոլոր տեղւոյն բնակիչք և պ. Եարալեանց աղնիւ երկրաչափն հիւրասիրեց իւր տան մէջ զՆորին Վեհափառութիւն և պատուեց սիրալիր ընդունելութեամբ և փառաւոր հացկերութիւն։ Միւս օրը 27-ին առաւօտեան ներկայացաւ Նորին Վեհափառութեան բոլոր տեղւոյս հայ ժողովրդականք և հոգևորական դասը, նոյնպէս և Ալէքսանդրապօլից յատկապէս եկած տեղոյն Ցաջորդ Բարեշ. Սահակ վարդապետը իւր քահանաներով և Հաղարծին վանքի վանահայր Բարեշ. Պօղոս վարդապետն, զորս օրհնեց Նորին Վեհափառութիւն և ապա նստելով կառք շարունակեց իւր ճանապարհը ուղեկցութեամբ շատ ձիաւորների։ Դէլիժան լինելով ռահմանագլուխ Վրաստանի վիճակին, Հայրապետի հրամանաւ Վրաստանի Առաջնորդ Դեր. Արիստակէս Եպիսկոպոսը մնաց այնտեղ Թիֆլիս վերադառնալու համար։ Երբ հասաւ Նորին Վեհափառութիւն Սեմենովկայ կայարանը՝ այնտեղ դիմաւորեցին Նորին Սրբութեան Երևանայ փոխթեմակալ Դեր. Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանց, գաւառապետ Պ. Վասպուրշակ Շահխաթունեանց իւր օգնականներով, Հաշտարար միջնորդ պ. Արշակ Տէր-Յովսէփեանց, Նոր Բայազիտու գործակալ Բարեշ. Պետրոս վարդապետ, Սևանայ վանից վանահայր Բարեշ. Կարապետ վարդապետ և մի քանի ուրիշ հոգևորականներ մեծ բազմութեամբ ժողովրդոց, որոց առաջարկած աղ ու հայն օրհնելով Նորին Վեհափառութիւն ուղեկցութեամբ յիշեալ անձինքների և շատ ձիաւորների շարունակեց ճանապարհը։

Երբ Նորին Վեհափառութեան կառքը անց էր կենում Զիբուխլու գիւղի մօտից՝ տեղւոյն հայաղգի ժողովրդականք արք և կանայք ծերք և տղայք վազէ վազ գալիս էին դէպի Նորին Սրբութեան կառքը։ Վեհ. Հայրապետը տեսնելով իւր որդւոց այդ ջերմեռանդութիւնը, չընայելով եղանակի սաստիկ ցրտութեան, բարեհաճեցաւ դադարեցնել տալ իւր կառքը և սպասել մինչև բոլորեքեան գան հասնեն, յետոյ օրհնեց զնոսա «Պահպանիչ»-ով և շարունակեց ճանապարհը։ Փոքր ինչ յետոյ Մաշտոցներ անուանուած տեղում՝ Սևանայ վանքի հանդէպ ընդ առաջ ելին Նորին

digitised by A.R.A.R.@

Վեհափառութեան բոլոր միաբանք այդ վանքի և համբուրեցին Նորա Սուրբ Աջը, որտեղից շարունակելով ճանապարհ Նորին Վեհափառութիւն հասաւ Ելենովկայ կայարանը։ Այնտեղ սպասում էին շնորհաբեր գալստեան Նորին Սրբութեան մեծ բազմութիւն շրջակայ գիւղերի հայերի, և այնտեղ պատրաստուած էր Երևանի փոխ—թեմական ենորէնութեամբ ճաշ։ Նոր—Բայազիտու գործակալ վարդապետը և քաղաքական դպրոցի կրօնուսոյց Եղիազար քահանայն կարդացին ճառեր, որից յետոյ Վեհափառն բարեհաճեցաւ վայելել պատրաստուած ճաշն և ապա օրհնելով ժողովուրդը շարունակեց իւր ճանապարհը։ Քանի ճանապարհը շարունակուում էր, այնքան և ուղեկից ձիաւորների թիւը հետզհետէ աւելանում էր։ Երբ հասաւ Նորին Վեհափառութիւն Ախթայի կայարանի մօտերը, առաւել ևս շատացան դիմաւորող ձիաւորներ, իսկ բուն կայարանի դիմաց անթիւ բազմութիւն ժողովրդոց սպասում էին իւրեանց քահանաներով արժանի լինել Նորին Սրբութեան օրհնութեան։ այնքան շատ էր բազմութիւնը, որ տեղական և Նորին Վեհափառութեան ուղեկցող քաղաքական սպայք և աստիճանաւորք հազիւ թէ կարողանում էին կարգ կանոն պահպանել, որովհետև ամենքը լցեալ անպատում խնդութեամբ կամենում էին տեսնել զՆորին Վեհափառութիւն, Նորա Սուրբ Աջն համբուրել և օրհնութիւնը առնել։ Վեհափառ Հայրապետը իջաւ իւր կառքէն, սիրով ընդունեց ժողովրդեան առաջարկած հացն և աղն։ Պահպանիչով օրհնեց զամենեսեան, որոյ ի պատասխանի թնդացուցին օդը ժողովրդեան անդադար և բարձրաձայն կեցցէներ։ Սրտաշարժ էր տեսարանը, անպատմելի էր ժողովրդեան ցնծութիւնը, որոց շատերը ծնկաչոք աղօթում էին, խաչակնքում էին երեսներ և ուրախութեան յորդ արտասունքներ էին թափում աչքներից, որ արժանի եղել են տեսութեան Նորին Վեհափառութեան իւրեանց հոգևոր Հօր։ Ախթայից նոյն հանդիսաւոր ուղեկցութեամբ բազմութեան ձիաւորների Վեհափառը հասաւ Սուխայա Ֆանտանի կայարանը, ուր նոյնպէս դիմաւորեցին մեծ բազմութիւն ժողովրդոց, որք մատուցին Նորին Սրբութեան աղ և հաց և Վեհափառն օրհնելով զնոսա մտաւ իւրեան համար գաւառապետ պ. Շահխաթունեանցի մեծ խնամքով պատրաստելտուած սենեակն գիշերելու։ Միւս օրը Հոկտ. 28ին Վեհ. Հայրապետն շարունակելով իւր ճանապարհն հասաւ Էլեառի կայարանը,

digitised by A.R.A.R.@

ուր սպասում էին Նորին Վեհափառութեան գալստեան Երևանի փոխ. նահանգապետ, գաւառապետ, շատ աստիճանաւորք, գունդ մի թիկնոցակոր զօրաց և անթիւ բազմութիւն հայազգի ժողովրդոց, որոց ուղեկցութեամբ Վեհափառ Հայրապետն ունելով առջևէն երկու քահանայ ձիահեծեալք՝ որոց միոյն ձեռք Խաչ Կաթուղիկոսական և միւսին Հովուապետական գաւազան, շարունակեց իւր ճանապարհ դէպի Երևան և երբ հասաւ Քանաքեռ գիւղին, այնտեղ դիմաւորեցին խաչերով, խաչվառներով և շարականով տեղական քահանայք և գիւղական հասարակութիւնը։ Վեհափառը ինքաւ կառքէն համբուրեց սուրբ խաչն և Աւետարանը, օրհնեց զամենեսին և վերատին նստելով կառք հասաւ Երեւանի սահմանագլուխը, ուր առաջ ելին Նորին Սրբութեան մեծ բազմութիւն ձիաւորների, Երևանի քաղաքագլուխ Գերազնիւ պ. Գեղամեանց Քաղաքական խորհրդարանի հայ և մահմէտական իրաւասուներով, որը մերձենալով Վեհափառ Հայրապետի կառքին ողջունեց Նորին Սրբութեան շնորհաբեր մուտքը գեղեցիկ և սրտառուչ ճառով։ Այնուհետև ուղեկցութեամբ ահագին բազմութեան ձիաւորների և կառքերի մէջ նստած ժողովրդոց, որոց մի ծայրը Քանաքեռ գիւղի մէջն էր և միւսն Երևան քաղաքի սկզբում։ Վեղհափառը շքեղ և ամենափառաւոր հանդիսիւ մուտ գործեց քաղաք, որոյ բոլոր տներ զարդարուած էին գոյնզգոյն դրօշակներով և կապերտներով։ Երբ հասաւ գնացքը մեծ հրապարակի սկիզբը պարտիզին քով, ուր շինուած էր գեղեցիկ կամար զարդարուած գոյնզգոյն ծաղիկներով, տերևներով և ծառատունկերով, որոյ միջակէտին կայր Վեհափառ Հայրապետի Անուան սկզբնատառը «Մ», Վեհափառը ինքաւ կառքէն։ Այնտեղ զգեստաւորեալ սպասում էին տեղւոյն բոլոր հոգևորականաց դասը իւրեանց գլուխ ունելով Երևանի Փոխ-Թեմական Սրբազան Սուրենեանց Եպիսկոպոսը, Գայիանեան օրիորդաց դպրոցի աշակերտուհիք ձեռքերին ծաղկափունջերով երկու կարգ շարուած և անթիւ բազմութիւն հայազգի և օտարազգի ժողովրդոց, որք լցուած էին մեծ հրապարակի, շրջակայ տանց տանիքների և ծառերի վերայ։ Անմիջապէս Վեհափառը հագաւ շուրջառ և առաւ ձեռքը խաչ և գաւազան և ապա հոգևորական դասը սկսաւ երգել «Հրաշափառ Աստուած» շարականը և այդպիսի շքեղ և հանդիսաւոր գնացքով մտաւ Ս. Սարգիս մայր եկեղեցին, ուր պատշաճաւոր սաղմոսեր-

digitised by A.R.A.R.@

գութենէն յետոյ, Սրբազան Սուրէնեանցն կարգաց ի դէմս Նորին Վեհափառութեան մի ազգու և խնամատալից ճառ, որում ի պատասխանի Նորին Վեհափառութիւնն դառնալով ժողովրդեան ասաց.

«Ողջոյն ընդ ձեզ դասք հոգևորականաց և աշխարհականաց. «ողջոյնս այս խաղաղութեան է նշանակ. ուր խաղաղութիւն է «անդ սէր, խնդութիւն, քաղցրութիւն, բարութիւն, երկայն- «մտութիւն և ժուժկալութիւն. այսոքիկ են պարգևք Հոգւոյն «Սրբոյ, զորս խնդրեմ յԱստուծոյ տպաւորել ի հոգիս, ի միտս և «ի սիրտս ձեր ամենեցուն։ Բարեպաշտոն Հանդիսականք. ըստ «սրբոց Հարց եկեղեցւոյ՝ եպիսկոպոսութիւն է մարտիրոսութիւն. «ապա ուրեմն և կաթուղիկոսութիւնն է բարոյապէս նահատա- «կութիւն վասն Աղգի և Եկեղեցւոյ. ո՞վ կերևակայէր թէ այդ «բարոյապէս նահատակութեան ասպարէզ մնանելն Ինձ պիտի «վիճակուէր. ո՞վ կերևակայէր որ Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ «Էջմիածնի տխրութեան քօղն ես պէտք է ի քաց պարուրէի յե- «րեսաց Հարսին լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, սակայն այ- «սոքիկ իրողութիւնք են, որք կատարեցան և որոց մէջ սակաւ է «իմ հոգեկան մխիթարութիւն։ Ո՞վ կտար Ինձ այն ցանկալի ա- «ռաւօտն և այն երջանիկ օրն, յորս բացուած տեսնէի Հայոց եկե- «ղեցական ծխական դպրոցներն, որոց միջումն է Իմ կատարեալ «հոգեկան մխիթարութիւն և բերկրանք։ Բայց և այնպէս եթէ «կենդանի հաւատք ունենանք առ Աստուած և կատարեալ հա- «ւատարմութիւն առ Օգոստափառ Կայսրն ամենայն Ռուսաց, «յուսալի է թէ մենք կը հասնենք մեր նպատակին։ Ուրեմն, սի- «րելիք, աղօթե՛նք առ Աստուած վասն երկարութեան կենաց «ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, աշխատենք անդրդուելի «մնալ մեր հաւատարմութեան մէջ առ Գահն Ռուսիոյ, հաստա- «տուն մնանք մեր հարազատութեան մէջ առ Մայրն մեր Ս. Կա- «թուղիկէ Էջմիածին, սիրենք և պաշտենք խաղաղութիւն, լի- «նենք առաքինի և բարի քրիստոնեայք և այն ժամանակ մեր «կեանքը կը քաղցրանայ, մենք կզգանք և կը վայելենք հանգըս- «տութիւն, խնդութիւն, բարութիւն և երջանկութիւն»։

(Մէղու-Հայաստանէ).

---

digitised by A.R.A.R.@